

«ՎԱՆԱԶՈՐԻ ԶՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

Պ Ո Ա Կ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՎՊՄԻ-ի ռեկտոր

\_\_\_\_\_ Գ.Կ. Խաչատրյան

“ 20 ” \_\_09\_\_ 2012թ.

Կարգ

«Վանաձորի Յովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական  
ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության հեռակա  
ուսուցմամբ մագիստրատուրայի 2012-2013 ուսումնական տարվա  
ընդունելության

Ընդունվել է ՎՊՄԻ գիտխորհրդում

(արձանագր. թիվ \_\_8\_ “ \_\_20\_ “ \_\_09\_\_ 2012թ.)

Վանաձոր-2012

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույնով սահմանվում է «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ինստիտուտ) հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի (այսուհետ՝ հեռակա մագիստրատուրա) 2012-2013 ուսումնական տարվա ընդունելության կարգը /այսուհետ՝ կարգ/:

1.2. Սույն կարգի իրավական հիմքն են ՀՀ Սահմանադրությունը, «Կրթության մասին» ՀՀ օրենքը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, ինստիտուտի կանոնադրությունը, ՀՀ ԿԳ նախարարի 2007 թ. դեկտեմբերի 6-ի թիվ 1193-Ն հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը», Ինստիտուտի մագիստրատուրայի ժամանակավոր կանոնակարգը:

## 2. Ինստիտուտի մագիստրատուրայի մասնագիտությունները և տեղերը

2.1. Ինստիտուտի հեռակա մագիստրատուրայի 2011-2012 ուսումնական տարվա ընդունելությունը կատարվում է հետևյալ մասնագիտությունների գծով.

Խ/Խ	Ծածկագիրը	Մասնագիտությունը	Որակավորումը
I	II	III	IV
1	031000	Հայոց լեզու և գրականություն	Մանկավարժության մագիստրոս

2.2. Ինստիտուտի հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի 2012-2013 ուսումնական տարվա ընդունելությունն իրականացվում է վճարովի հիմունքներով:

2.3. Ինստիտուտի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (վճարովի), առանց պարտադիր զինվորական ծառայության տարկետման իրավունքի «Հայոց լեզու և գրականություն» հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի տեղերի թիվը կազմում է 20 տեղ:

## 3. Մագիստրատուրայի ընդունող հանձնաժողովը

3.1. Մագիստրատուրայի ընդունելությունը կատարում է ռեկտորի հրամանով կազմավորված հանձնաժողովը Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ռեկտորը (հանձնաժողովի նախագահ), ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորները, ուսումնամեթոդական վարչության պետը, ֆակուլտետների դեկանները, մագիստրոսական ծրագրերի համակարգողը:

3.2. Հանձնաժողովն ուսումնասիրում և քննարկում է հեռակա ուսուցմամբ մագիստրատուրա դիմած անձանց գործերը և որոշում է կայացնում՝ տվյալ անձին հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելությանը մասնակցելու թույլտվություն տալու մասին:

## 4. Ինստիտուտի հեռակա ուսուցմամբ մագիստրատուրա ընդունվելու համար դիմելու ժամկետները և ներկայացվող փաստաթղթերը

4.1. Հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելությունից մեկ ամիս առաջ զանգվածային լրատվության միջոցներով տրվում է համապատասխան հայտարարություն:

4.2. Հեռակա մագիստրատուրայի ընդունելության համար գործերի ընդունումը կատարվում է .....

4.3 Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

- դիմում-հայտ Ինստիտուտի ռեկտորի անունով

- բարձրագույն կրթության մասին դիպլոմի և նրա հավելվածի բնագրերն ու պատճենները
- տեղեկանք աշխատանքի վայրից
- անձնագրի պատճենը (2 օրինակ)
- 4 լուսանկար /3x4 չափի/

## 5. Հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելության կարգը

5.1. Ինստիտուտի հեռակա ուսուցմամբ մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել բակալավրի և դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող ՀՀ քաղաքացիները:

Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք մագիստրատուրա կարող են ընդունվել միջպետական կամ միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի հիման վրա, լրացուցիչ տեղերի հաշվին, ինչպես նաև վճարովի հիմունքներով՝ սեփական նախաձեռնությամբ:

5.2. Հեռակա ուսուցմամբ մագիստրատուրա ընդունվելու համար կարող են դիմել բակալավրի կամ մասնագիտական որակավորում ստացած շրջանավարտները:

5.3. Հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելությունն իրականացվում է երկփուլ ձևով:

5.3.1. Առաջին փուլով ընդունելությունը կազմակերպվում է տվյալ մասնագիտությամբ բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող դիմորդների համար:

5.3.2. Առաջին փուլով ընդունելությունը կատարվում է քննության արդյունքներով՝ մրցութային կարգով:

5.3.3. Հարցազրույցն անցկացվում է տվյալ մասնագիտության բակալավրիատի կրթական ծրագրերի մասնագիտական ավարտական առարկաների քննական հարցաշարերի շրջանակներում:

5.3.4. Հարցազրույցի արդյունքներով մրցութային հանձնաժողովը կայացնում է որոշում հարցազրույցը հաջողությամբ անցած դիմորդների մասին:

5.3.5. Ինստիտուտի ռեկտորի հրամանով հարցազրույցը հաջողությամբ հանձնած և մրցույթը հաղթահարած դիմորդները համարվում են հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի առաջին կուրսի կցագրված ուսանողներ:

5.3.6. Առաջին փուլով ընդունելության հարցազրույցն անցկացվում է 2012թ սեպտեմբերի 25-ից մինչև սեպտեմբերի 27-ն ընկած ժամանակահատվածում:

5.4. Երկրորդ փուլով ընդունելությունը կազմակերպվում է այլ մասնագիտություն ունեցող բակալավրների և/կամ դիպլոմավորված մասնագետների համար՝ առաջին փուլով ընդունելության անցկացումից հետո թափուր մնացած տեղերի հաշվին:

5.4.1. Երկրորդ փուլով այլ մասնագիտություն ունեցող բակալավրիատի շրջանավարտների և դիպլոմավորված մասնագետների ընդունելության համար կազմակերպվում են ընդունելության քննություններ մագիստրատուրայի մասնագիտացման առարկայից՝ տվյալ մասնագիտության բակալավրիատի կրթական ծրագրի ծավալի սահմաններում:

5.4.2. Երկրորդ փուլով ընդունելությունը կատարվում է առաջին փուլով ընդունելության անցկացումից հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում:

5.4.3. Քննական հանձնաժողովը անցկացնում է մրցույթ՝ առաջին փուլի անցկացումից հետո թափուր մնացած տեղերի համար հավակնորդներին որոշելու նպատակով:

5.4.4. Ինստիտուտի ռեկտորի հրամանով ընդունելության քննությունը հաջողությամբ հանձնած և մրցույթը հաղթահարած դիմորդները համարվում են հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի առաջին կուրսի կցագրված ուսանողներ:

5.5. Հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողների հրամանագրումը կատարվում է ուսանողի և Ինստիտուտի միջև պայմանագրի կնքումից և 10 օրվա ընթացքում ուսման վարձը վճարելուց հետո:

### *6. Տվյալներ մագիստրատուրայի ուսումնական գործընթացի մասին*

6.1. Հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ուսուցման տևողությունը 2,5 տարի է:

6.2. Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակներով՝ ձմեռային և ամառային քննաշրջաններով:

6.3. Առաջին կուրսի դասերը սկսվում են .....